

## ԱԿՆԵՂՆԵՒ ԵՐԿՈՒ ՑԱՆԿ

Հայ մատենագրության սկզբնավորումից ի վեր ակնեղենը հետաքրքրել է շատերին, կազմվել են զանազան կարգի բնագրեր: Այդ հետաքրքրության արտահայտությունն է եղել նաև Դ դարի մատենագիր Եպիփան Կիպրացու՝ Սուրբ Գրքում հիշատակված տասներկու թանկարժեք քարերի մեկնությունը («Վասն ականց պատուականաց», Բազմավեպ, 1856): Հետագայում կազմված համանման բնագրերի հեղինակները այս կամ այն չափով օգտվել են սրանից: Հին բնագրերից մեկը վերագրվում է Անանիա Ծիրակացուն (Ա. Աբրահամ-յան, Ծիրակացու մատենագրությունը, էջ 152—154, բնագիրը՝ 260—261): Ինչպես նշում է հրատարակիչը, Ծիրակացու ցանկում քարերի թիվը 22-ով ավելի է (33), և Ծիրակացին, ի տարբերություն Եպիփանի, չի հաղորդում քարերի բժշկական նշանակության և հանքավայրերի վերաբերյալ տեղեկություններ: Հետագայում հանդես են գալիս բառարանագրական զանազան բնագրեր. սա վերաբերում է առավելապես ԺԶ—ԺԷ դդ.: Հայտնի է, որ Երեմիա Մեղերցու «**Բառք ի գրոց Ելիցն**» բառացանկում կա «**Անուանք երկրտասան ականց**»: (Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (16—17 դդ.), Երևան, 1971, էջ 104—105): Նկատենք, որ առավել ընդհանուր բնույթի բառարաններում եղած նյութը դեռևս ուսումնասիրված չէ, որ, սակայն, հետաքրքիր է անկասկած: (Տե՛ս, օրինակ, ծանրապոյր-ի «մտռան սպիտակ» բացատրությունը՝ նշվ. աշխ., էջ 277, որ քաղված է ՄԱՄ 6275 ձեռագրից):

Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 1786 ձեռագիրը (թղ. 187ա—193բ) պարունակում է երկու բնագիր, որոնք ուշագրավ են մի քանի առումով: Առաջինը՝ «Անուանք ականց» (թղ. 72ա—77ա), Ծիրակացուն վերագրվող ցանկի նման ունի 33 անուն: Բայց եթե հին բնագիրը նշում է քարն ու նրա գույնը, վերջինս մանրամասն տեղեկություններ է հաղորդում, բերելով թարգմանություններ լեզվով (եբրայեցերեն, լատիներեն, հայերեն):

Ձեռագրի 77ա էջում կա մի փոքրիկ բնագիր՝ «Ահարոնի չորեքկարգեան ականակապ վակասին գերկոտասան ակունան այս է. Հեբրաեցուց և եօթանասուն և երկու թարգմանչաց օրինակին»: Ելից գրքի ԻԸ գլուխը Ահարոնի և նրա որդիների զգեստավորմանն է նվիրված (լսնչապանակ, եփուղ, պատմունան, նկարագործ շապիկ, խույր և գոտի...): Ահա մեզ հետաքրքրող հատվածը.

«Եւ ընդելուզցես ի նմա ընդելուզածս, ըստ չորեքկարգեան ականց. կարգ ականցն, առաջին՝ գմբուխտ և սարդիոն և տպագիոն, կարգ մի: Եւ կարգն երկրորդ՝ կարկեհեան և շափիղա և յասպիս: Եւ կարգն երրորդ՝ գոճազմ և ակատ և սուտակ: Եւ կարգ չորրորդ՝ յակինթ և բիրեղ և հլունգն ընդելուզեալ, յուկի կապեալ՝ յիրաքանչիր կարգս կայցեն: Եւ եղիցին ականքն յանուաց որդուցն Իսրայելի երկրտասան, ըստ անուանցն նոցա գրեալք քանդակաւ՝ իրաքանչիր ըստ անուան իրում լիցին, ըստ ազգացն երկրտասանից:

Ելից ԻԸ, 17—22:

Տասներկու քարերը հաճախ են հանդիպում մատենագրության մեջ: Ներսես Բաղիշեցին իր «Գովեստից քան»-ի մեջ թվարկում է քարերը, հատկությունները և անվանում համապատասխան նահապետներին ու առաքյալներին.

սարդիոն-շիկագոյն— Ռուբէն, Փիլիպոս Գալիլյացի  
կարկեհան-կայծ— Յուդա, Մատաթիա առաքեալ  
շափիղայ-ծիրանագոյն— Դան, Պողոս  
յասպիսակ-նազելի— Նեփթաղիմ, Պետրոս  
գոճազմն-կապուտ— Ասէր, Անդրէաս  
սուտակն լիգրիով-կապուտ, առաքագոյն— Գաղ, Թադէոս  
ակատ-սուկիափայլ— Ջաբողոն, Բարդողեմիոս  
յակինթ-մեծագին— Սաքար, Ծմաւոն  
եղունկ-գեղագունեալ— Բենիամին, Յակոբոս  
բիրեղ-ծովագոյն— օդատեսակ և պարզագոյն— Յովսէփ, Թումաս 2:  
Ա. Զմբուխտն՝ կանաչ է և յուսաւոր:  
Բ. Սարդիոնն՝ շիկագոյն արիւնատեսիլ:

Այսպես բերվում են՝ տպագրիւմ, կարեհան, շափիղայ, յասպիս, գոնազմն, ակատն, սուտակ, լակիմք, բիրեղ եղունգն, դահանակ, հիրիկ, ոսկէքար, յատիկ, կայծակն, ամեթուտոս, մեկեպիկ, խածուրտ, սաբերուն, լակունդ, հակիմքոս (որ նույնն է Ասխորդի հետ), ամարակոդոս, միւս զմրուխտ, միւս յասպիս, միւս ակատն, միւս մեթուտոսն (սա միակ մեթուտոսն է), երիսաղիթոս (նոյն ոսկէքարը), բիրեղոս (տե՛ս վերևում— բիրեղ), այլ բիրեղ, մեգիստոսն, լաջուարդն (**Ա. Արրահամյան**, Ըշվ. աշխ., էջ 260—61, տե՛ս և **Բ. Չուգասպեան**, Գեղորդ դպիր Պալատեցու կեանքի և գործունէութեան տարեգրութիւն: 1787—1811, Երեւան, 1994, էջ 50—51, 123):

«Անուանք ականք»-ը բավական մանրամասն տեղեկություններ է հաղորդում հանքա-վայրի, այնտեղից տվյալ քարը արտահանելու հնարավորության և քարի բուժական հատկությունների մասին: Դիցուք՝ զմրուխտի հին հանքավայրը Եգիպտոսի մերձակայքում էր և կոչվում էր Սայիդի: Հեղինակը տեղեկացնում է, որ այդ հանքավայրն արդեն սպառ-լած է. «Այժմ նոր մաղանն յԱմերիկայ է»: Դահանայի ֆոսֆորի քարը և Սմերիկայից է բեր-վում: Այս դեպքում հեղինակը երկիրն անվանում է Նոր երկիր և քացատրում՝ Ենգիդոնիա: Հեղինակը հայտնում է բազում թարմ տեղեկություններ, ընդմ, օրինակ, որ 1667 թ. հո-լանդացիները «առին Փուրթուբէլէն» և այլն: Կա մի այլ հանգամանք, որ թույլ է տալիս ենթադրել, թե քննադիր բանավոր խոսքի սղագրություն է: Թունադեղի կապակցությամբ կարգում ենք. «Այն որ կոչվու է՝ մեծ է և բոլոր գունդ, որպէս այս կամ այսպէս, քայց է մեծ քան զսոսայ...»: Հավանաբար նա իր խոսքին զուգահեռ ցուցադրել է քարեր և այն տեսակները, որ ձեռքի տակ չի ունեցել, համեմատել է եղածների հետ: Նույնպիսի փաստ հանդիպում է և ջաղփարին (82) նվիրած պարբերության մեջ. «Եւ է փոքր այսչափ կամ այսչափ, կամ այլ մեծ՝ այսչափ»:

**Ա. Ա. ԽՈՒՂԱՎԵՐԿՅԱՆ**

## Ա. ԱՆՈՒԱՆՔ ԱԿԱՆՑ

[1] Լիգրոն, որ է Ալմաս, որ հայերէն է Լիգրոն. և ֆոսֆորային Դիամանդ ասի և է գոյն, պիլօրի, նաքաթի, ֆստդի, դեղին, զէթունի, ամանի, կարմիր. սեւ. լաւն Նեք-փոռու երկրէն կրգոյ. այս Նեքփոռու երկիրս Բիարփաթանու մօտ այ: Բ ուշայ կայ. ինքնագոյն են, որ Հընդատանց թագաւորի երկրում չեն, մեծամեծ և թանգայգին Ալմասն՝ տեղէն կրգայ: Եւ երկրորդն, Հէյդարաքաղ, որ է Բագնագարայ, երկրէն կուգայ շատ, որ ամենայն մարդ առում ծախում է: Ասացեալ են թէ կինն որ դժար լինի ծնանում զաւակ, այմասն ի բազուկն կապէն, արձակի ա[ստուծո]վ. որ զայս փորձեալ են: Քաֆն ևս ալ-մաս է և է չոր և պղտոր և զէթունի սևախառն գոյն, որ Ալմասն սովաւ կտրեն և տաշեն:

[2] Կայծ, կամ Կարկեհան, ասի հայերէն, որ է Յեաղութն, և ֆոսֆորային ասի Ռուբին: Ի հնդկաց կղզէն կու ելնու, որ ասեն Փէգու. թագաւոր նստի անդ, որ լաւ յեաղութն մինչև և դիէթն էլ եւելի. չի թողոր թագաւոր, որ իւր երկրէ դուրս բերեն, եթէ բերեն՝ զաղտ բերեն: Չորս գոն է յեաղութն. կարմիր, լուրջ, դեղին և սպիտակ, արդարանի և քացախի գոյն: Լուրջը չորս գոյն է, երկնագոյն, յեղակի գոյն, գետագոյն և կապտագոյն, որ կանան-շախառն երկն: Դեղինը չորս գոյն է. մոմի գոյն, թուրնջի, դարմանդագոյն և պիլօրի, այսինքն դեղնաշաղ ճարմակագոյն: Ասեն թէ ոսկին հայեն և կարմիր յեաղութն մէջն զցեն՝ գոյնն ոչ աւերի: Ասեն թէ մարդ որ ի բերանն առնու՝ ծարաւն տանի դեղին յեաղութն. որ Սէյ-լանայ կղզոյն ելնու, որ ասի ի հայերէն Տպագիոն, և Պիճատ, և ֆոսֆորային Թօփացիուզ (Տոպագ) ասի:

[3] Զմրուխտն, որ հայերէն ասի, որ է Զմրութ, որ հայերէն ևս Դահանակ ասի, և ֆո-սֆորային Զմրալ ասի. որ յառաջ քան զայս, այսինքն թէ Փրկչին: Մ.. մօտ ի մըր մաղան կայր անտի ելանէր, որ Սայիդի ասեն, որ է հին մաղան, այժմ ոչ ելանէ անտի: Այժմ նոր մաղանն յԱմերիկայ է, որ է Գ գոյն: Ըռագանի, ռեհանի, բանջարի: Ասացեալ են բազումք թէ Սայիդի զմրութն, որ է հին մաղանն, եթէ հետն պահէ մարդ՝ թունաւոր չի մերձենալ ի մարդն, և եթէ օձի դէմ բռնես՝ օձի աչքն կուրացուցանէ, և թէ զաֆրանաւ ի վերայ անողի քարի վերայ լուես և աչքն քաշես՝ լույս աւելացնէ, և այլ եթէ թունաւոր կամ օձ խայթէ, վարդի ջրով հարեն, ի վերայ քսեն՝ օգտի Ա[ստուծո]վ: Ասացեալ են ևս թէ եթէ մարդոյ դեղ որ զահր լինեն սովել, երկու դիրէթ, ռահմանի ուղտի կաթնով, այսինքն վա-վական (վազական) ու դամիկայ, այն ուղտի կաթնով տան որ խմի, ազատի Ա[ստուծո]վ: Եւ այլ բազում շահ ունի հեղն պահելն...

(Էջի կեսից ավելին՝ դատարկ):

[4] Սուտակ, որ է Լալ, և լաթիներէն Ամեթուտոս, որ այս Բաղաշխանայ երկրէն կու գա, որ ասեն թէ Զիմշիտ թագաւորի ժամանակն ծածք եղեն, և երկիրն պատառեալ. այս Լալս երևեցաւ: Լալս է գոյն ունի. աթաշի, փիագի, աղարքի և այլք սոցին նման: Եվ ասեն՝ թէ մարդ ի բերանն առնու՝ ծարաւութիւն տանի և ի մաջունն ևս խառնեն:

[5] Մարգարիտն, զոր ֆռանկաց Աղշոֆր ասի, և պարսիք ասեն Մուրվարի, լաւն և աղեկն մօտ ի Հուրմուզ կղզի կայ, որ Բահրայիմ ասեն, անտի ելանէ, և երկրորդը ի Փորթըզալայ ելանէ, երրորդն՝ Հընդկացշիհն Փաթաւնայ ելանէ, և այլ ի բազում կղզեաց ներքին Հընդկաց, որ ասի Ջիրբաղ, Ջաւուց և այլ տեղեաց ելանէ, բայց գլոխն և լաւն Բահրայիմուն է, և այլքն մօտ ի սալ ոչինչ չարժեն և ոչինչ են:

[6] Ակատ, հայերեն ասի, որ է Այնըլիօն, և լաթիներեն ասի Հիաշիմթուս կամ (Նիքս), ի հընդկաւ է կղզի մեծ, զոր անունն է Սէլլան, լաւն ի յայն տեղն կուգայ, որ դեղին, կապուտ և ճերմակ Եաղութ այլ կուգայ այս Սէլլանայ: Եւ այս կղզին կայ մեծ աջայ. դարչինն այս կղզոյս ելանէ և բոլորն կղզոյս է բազում բերդս. յառաջն Փուրթուրէշիհն ձեռքն էր, և ի թիվ Փրկչին 1687 հօլանդացիք առին ի Փուրթուրէշէն, բայց կղզոյն միջին ուսջն է ինքնագլոխ և ոչ կարէ մերձենալ երկիր ճողայ, զի դժվար է ճանապարհն: Եւ այլ այս Այնըլիօնսի Փէգուուց ևս կուգայ, որ կայ կարմիր Յեաղութն: Եւ է գոյն սորայ կապտաշորթ կանանչախառն դեղնագոյն, մսագոյն, որ գոյնգոյն գօտի երկի ինքն: Եւ ինչ որ բնութիւնն Յեաղութին է, բովանդակն ի սմայ գտանի:

[7] Յասպիս ասի հայերեն և լաթիներեն և Եասպիս, որ Ջարաբջաթ, Ջմրութե մահանի տակէն ելանէ, և է կանանչ դեղնագոյն, սակաւ մի բնութիւնն այն է, որ լինքն շատ հայելն յաչաց լոյս աւելացնէ, և թէ սղկեն՝ ի յաչքն քաշեն, զաչաց բորն տանի և ասեն ևս թէ գործութեան այլ լաւ է:

[8] Ծափիղայ հայերեն ասի, լաթիներեն՝ Սաֆիրուզ, որ է Փիրուզայ: Գ ցեղ է. Նշաբուրի, Խաւիղ և Եարաբէքի, որ ամենն Նշաբուրի երկրէն կը ելնու, իսխաղին (ճերսի՝ աջ լուսնացքում խցկած՝ կամ թորեզէ՝) սաֆ է, և առանց դամարի, բայց ճշմարտորին գունով է: Ապայ ի կրակէն չի ելնու և ի մշկէ, քաֆուրէ և ի թացութենէ պատրաստ պիտի պահել որ շուտ կաւերի:

[9] Սարդիոն, որ հայերեն ասի և լաթիներեն՝ Սարդիուս, որ է Յեամանի, որ ի Յեամանու (Եմէ՞ն) երկրէն կուգայ: Չորս գոյն ունի. կարմիր, սպիտակ, դեղին և մաւի, որ սեւագոյն ալ լինի: Լաւն մուք կարմիրն է, որ դամար չը լինի և միջակարմիր. և բաց կարմիր այլ լինի, կիսաթափանց է:

[10] Ոսկեակն, որ է Ոսկէքարն: Ասի հայերեն և լաթիներեն ասի Քրիսոլիթոս, որ է Թիլիայ: Հէղարարաղայ երկրէն կուգայ և է գոյն պիօրի դեղնաշաղ, ոսկոյ փայլ, որ թէ քարակ շորով պատես և կայծ դնես վրան՝ ոչ այրի շորն:

[11] Յակիհթ կամ Ակատ հայերեն ասի և լաթիներեն ասի, Կամոնիքս, որ է Աղիլ: Հընդկաց երկրէն, ի քաղաքէն Քամբաթայ կու գայ, և է բազում գոյն կարմիր, սպիտակ, դեղին, ճարմջի, ջրագոյն, ամպագոյն, զէթունի, և այլ սոցին ճման կիսագոյնք, բայց լաւն մուք կարմիրն է, որ դամար չլինի:

Է ևս անդ այլ կերպք հաղիղներ, զոր կատվա աչք ասեն բոլոր բոլոր խալեր կայ մէջն. բ. գ. դ. խալ, որ կատվի աչքի ճման: Է ևս որ տափակ տափակ, մէջն ծառի և ծաղկի ճման վերալքն. և է որ մէջն որպէս մարդոյ պատկեր նկարեալ կերպացել է: Այս Աղիլս մօր ի Բրվօջ քաղաքն է, և յորժամ հանեն մաղանէն՝ մեծ մեծ քար է. տանեն Քամբաթ քաղաքն, որ է մերձ ճմայ. և քարերս ջրով եփեն այնքան, մինչի թուլանայ. հանեն կտորատեն և Հաղիղս միջէն ելանէ. յետոյ տանեն տաշեն:

[12] Գոճազն ասի հայերեն, և լաթիներեն Լիգուրիուս կամ (Թուրքուզ), որ է Լաշվարդ, ի Օզբէգի երկրէն, Բաղաշխանայ կը գոյ: Լաւն այն է որ հաւկիթի պէս սպիտակ կեղև ունի, և աղեկ է, որ մէջն դամարոտ և սպիտակ չլինի և ոսկէ նօշտաներ ունենայ. և թէ կրակն զցես այրի՝ ապա գոյնն չի փոխի: Ապայ եթէ թէզաթի ջուրն դնես՝ սպիտակի որպէս զծիւն և դեղորէից էլ բան կու գաոյ, որ աչաց ծարիրի:

[13] Սարդիոնն, որ հայերեն ասի և Լաթիներեն ևս Սարգիուս ասեն, որ է Սէլլան, ի հընդկաց (գրած-ջնջած՝ կղզոյն Սէլլան) որ է Հէղարարաղայ երկրէն կու գայ, և է գոյնն կարմիր և փոքր ինչ և ծիրանեգոյն և է փայլուն և բնութեամբ չոր: Ասէ թէ Սէլլանն հետն պահելն կամ քմթի վերայ դնելն արիւնն կտրէ:

[14] Սլէյմանին Հէղարարաղայ երկրէն կուգայ և է տակ տակ. մէկ տակն սեւ է. և մեկ տակն ճարմակ: Մաւիճն և ճարմակը լաւ է, և խիստ պինդ է և չոր:

[15] Բիրեղ հայերեն ասի և լաթիներեն [Թերիլուզ ասեն, որ է Դօն: Հէղարարաղայ երկրէն կուգայ և է պիօրի սպիտակ և է որ սպիտակ դեղնաշաղ, և է որ մխագոյն: Նշանն այն է որ դէմ ի յերեսդ բռնես և նայես, պատկերդ զլիխ վայր երկի, եւ ասեն թէ ծեծեն և հին խոցի վրայ առեն՝ ողջանայ Ա[ստուծոյ]վ, և ներկուի որ ամենայն գոյնն ընդունի, կարմիր, կանանչ, դեղին և այլ գոյն:

[16] Ծգան որ թորքի բառի բարաղօտի ասեն, որ Յեմանու երկրէն կու գայ, լամենից գունից շաղկապեալ է լինքն, մեծամեծ լինի, չոր է և պինդ:

[17] Ռուսաղ. Հայդարաբադայ երկրէն կուգայ, և գոյնն կարմիր է որպէս յետադոթ, և շատ ջրով է, և մեծմեծ էլ կու լինի: Բայց շատ կակոռ է ինքն:

[18] Յեսասիս, որ է Յեսաղմ, Ղաշխարու երկրէն կուգայ, շատ մեծ մեծ կու լինի մինչի բ՛ գազլ կու լինի, որ է գոյնն սպիտակ թոթոյ գոյն, բլղամի և փերփերի գոյն և ձիթոյ պողի գոյն, և այլ ցածն, սեւագոյն ձիթապտղի: Լաւն բլղամի պարզն է, որ դամարտու չընի: Ասեն՝ թէ մարդ որ հետն պահի՝ սիրտն չի դողայ և ժածքի և կայծակի ստեն լաւ է հետն պահելն:

[19] Բուստ. հայերէն ասի և ֆուանկաց Կոտայ ասի, որ է Մարջան, երկու տեղ ծովէ կընէ. լաւն մերձ ի Զէնոս: և Յալիկոնայ որ է յետոպիպա. անտի ելանէ. և այլ մերձ ի Թօնոս ելանէ, իծովուն տակն բուսնի որպէս ծառ. լողորոք իջանեն որպէս մարգարիտ հանեն, յետոյ բանտանեն և տաշեն: Ի կրակէն չի ելնու և թէ ի թաքուն գծեն՝ սպիտակի և այլ ի մէջ ծովուն կակոռ է, յործամ հանեն ամրանայ. լաւն խորու կարմիրն է:

[20] Քուհքարն. Տանձկացու երկրէն կուգայ, որ է մերձ լեհաց որ է Բ կերպ. լաւն բալղամին է և յետոյ Աթաշին, որ է ոսկոյ գոյն, դարմանագոյն: Մեծ մեծ ճօթ լինի ամէն:

[21] Ակպաճ, որ է Սաթ, և խորու սևագոյն, և թեթև, որ թէ ջրին երեսն օգեն՝ տակն չի մնայ, այլ երեսն ելանէ: Ասացեալ են թէ երեխային աչքն որ լուրջ լինի, այս քարս որորոցի վերայ կախեն, նա շատ հայելով աչքն որ լուրջ է, սևացնէ և այլ, լոյսն աւելացնէ, որ փորձեալ են այս: Ի պարսից բանդարներէն, որ է Մեծ ծովն՝ անտի գայ այս:

[22] Դահնայի ֆուանգի քար է, կապտաշաղ կանանչ և ֆտողի մալի գոյն: Փորձելն այս է, որ քացախով կամ լիմոնի ջրով ի վերայ ջօհարդար դանակի քսես, նայ ոսկէ գոյն կամ արծաթի գոյն ելանէ, և որ ոսկէ գոյն ելանէ, լաւն այն է, որ ի աչաց դեղն մտանէ: Եւ Նոր աշխարհէն գայ այսինքն յԵնգիդունիայու, և ոսկոյն, ոսկոյ մաղանէն, բայց ոսկոյ փոքր կայ:

[23] Մղնադիս ֆգայ: Որ է արծաթի քաշօղ, ժանգատի գոյն քար է, որ Հաքաշտանայ կուգայ: Ազաւէ Գման Մղադու քարի, որ արակաթն ի յինքն քաշէ. Գմանպես և սայ արծաթն ի յինքն քաշէ որ թէ ոսկոյ, արծաթի, պղնձի և ծարկաթոյ խարտուք լինի: Ճէլուէլ խողած, և այս քարս մերձ դնես, ինչ որ արծաթն է սայ յինքն քաշէ:

[24] Անդամանդ, որ է Մղադու քար. հիմն երկաթագոյն է, որ բեռացուցչին: Զիսագիչն այսով առնեն, որ արկաթն ի յինքն քաշէ. (և անշարժ հոգի ասեն սորայ) աման է ամեն տեղ: Ասացեալ են՝ թէ ծննդակաց կինն ի ձախ ձեռն առնու՝ շուտով ազատի:

[25] Եսաք, որ է Փերփերի. գոյն կանանչ և կայ ի յինքն կարմիր կետեր շատ և պինդ է, ի բանիլն մօտ ֆուանկաց պատուական է և շատ է, ամէն տեղ չկայ:

[26] Օձի քարն որ գատ Մօհրաց ասեն, բազում ցեղ է. սեւ, դեղին, կարմրախառն գոյն, գէթունի, բլղամի և այլ գոյնզգոյն, լինի որ բոլոր բոլոր, լինի որ նօշտայ լինի և լինի որ երկայն երկայն և նաղաշ այլ լինի, ամենայն օձի խորես Գմանի և Բ օձի քար. ի դար քարի վերայ քացախ կամ լիմոնի ջուր դնես, և այս Բ քարս մին միանոյ դէմն դնես՝ գան և ողջունեն զմիմեանս և այլ ետ դառնան: Եւ ամենայն թունաւոր խայթ զմարդ, այս քարս ի վերայ յետան վրայ ջրով հարեն, պորմի արքուցանեն՝ օգտի Ա[ստուծո]վ. կամ է այս քարս դնեն ի խայթած տեղն, կալի մինչի Բ. Գ. Դ. օր կամ աւելի, որ ըստ ինքեան սնկանի քարն. օգտի Ա[ստուծո]վ. բայց քարն նոյն ժամն ձգեն ի կոկի կաթն, որ գոր հանէ կաթն ի քարին:

[27] Եւ է այլ միս Օձիքար. թորքերէն Խորէլիազ սոլչասի ասեն, բոլոր է և սպիտակ. Լարաֆ ջնեն է. մէկ երեսն դուրայ է, և միս երեսն դուր, ի դուր երեսն ունի մարդուրայ բարակ սև թել և է որպէս զօծ կուտապեալ. այսինքն ոլոր ոլոր ձեռայ: Ասեն թէ քաջմագօզ, որ է մոթօզ այս քարս. օձի խածած տեղն դնես՝ կալի և չի պոկիր, մինչի Ը օր մինչ ցողջանայ Ա[ստուծո]վ, և ապա պոկի այս քարս:

[28] Ղուն քար ասեն հայերէն, և արաբացիք՝ Խամանի ասեն որ է երկաթ չինի, և պարսիկք՝ Մանգրադիդի ասեն, ի պարսից երկրէն կու գայ, մերձ ի հընդկայ և բալխայ երկաթի գոյն է, և ծիրանի գոյն այսինքն բանաւ: Եւ երբոր ի լե[մի տառ՝ անընթ.] ասն արբենն՝ նա կարմիր լինի, կայ որ աղ կամ չեղին կամ բանաւ կամ սպիտակ լինի: Բայց կարմիրն որ ի սրբածէն ելանէ վարդի ջրով լուես ի վրայ ուռուց դնես՝ ինչ ցեղ ուռուց լինի՝ լաւնայ Ա[ստուծո]վ: Այսպիսի քար Հընդկաց բոգարաբայ երկրէն ելնէ. և այլ Հաքաշտանայ էլ կուգայ. չոք կողմացի, արծաթի ժանգի գոյն է, և թէ ծննդական կինն դժար լինի ծնում, այս քարս ի յաշ անդամն կապեն, շուտով ազատի Ա[ստուծո]վ, և շուտով այս քարն վեր տուուն ազատելու յետ, որ թէ մնոյ աղիքն դուրս կու քաշի, զի բազում անգամ փորձեալ են:

[29] Թունադեղ ասի հայերէն և արաբացիք Հազար ըլթես ասեն և պարսիկք Փաճգահ ասեն: Հընդկաց երկրէն կուգայ, որ է Մուլաքարա քարէն և Զիրքադայ, որ է Գերքին Հընդկաց աշխարհէն Մալադոյ և Թահրիճօվն և այլ կղզեացն: Ի պարսից մերձ ի Թիրազ քաղաք. լեան մի կայ գոր Թապանքար ասեն, անտի ևս կուգայ. եւ է բազում գոյն, որ է

սեւագոյն գէյթունի, կարմրախաւճ գէյթունի, կանաճչախառն գէյթունի, դեղնագոյն գէյթունի և այլ այսպիսիք: Եվ Գ կենդանոյ լեղոյ ելանէ, որ է ի վայրի կօվուց, երկրորդն վայրի այծոյ, այսինքն այծեմանց: Երրորդն կապիկոյ, այսինքն մայմունոյ: Այն որ կովու է՝ մեծ է և բոլոր գունդ: Որպէս այս կամ այսպէս քայց է մեծ քան զոտայ: Եւ այն որ այծոյ և՛ բոլոր երկայն է այսպես այսպէս: Եւ որ մայմունին է, քարակ է և պզտիկ, այս ապայ քան զամենայն լանն, մայմունին է և այնույնտ, այծուն, ետ սոցայ կովուն: Բայց այս կովունն դեղորեից քաւ չի գոյ: Եւս փորձելն այս է, որ ասեղն ի կրակն լաւ կարմրացո և խօթ է ի փազաճը, այնօր դեղնագոյն ծիրանի ելանէ ծուխն՝ լաւ է, եթէ սեւաւ ելանէ՝ լաւ չէ: Դարձեալ կովու կաթնով հարէ ի վրայ քարի. եթէ կարմրախառն կամ դեղնախառն ելանի, լաւ է, եթէ սեւաւ՝ չէ լաւ: Դարձեալ առ մոխիր քարակ՝ որպէս փոշի, քսէ ձեռքդ և փան հազր, ձեռքդ հարէ. եթէ մոխիրն դեղնի կամ կարմրախառնի՝ լաւ է: Ասեմ թէ ի հետ պահելն լաւ է. թունաւոր չի մերձենար ի մայ. եւս թէ ռզիսանի ջրով հարեն՝ օձահարն օձեն, օգտի Ա[ստուծո]վ:

[30] Ամբարն ի ներքոյ երկիրն Հընդկաց, որ ասի Ջիրբաղ, ի կղզեայն ծովու ի ծերպս վիմայ ելանէ: Եւ է նօսր քար կերպ: Առաջինն լանն այն է, որ ճարմակ. մարմնոյ գոյն խաշխաշի լինի, ապայ եթէ սեւագոյն ճարմակախառն՝ լաւ չէ, այլ է վատ: Եթէ մոմ ունենան, փորձեալ՝ ասեղն տաքացոր, խօթ ամբարն և մոմն եթէ մոմ ունենայ, ասեղն կը կպի, դուս կը հանի:

[31] Մուշկն Հընդկաց ի ներս, Բութանդայ երկրէն կու գայ, փորձերն առ բերանդ, եթէ դառն է՝ լաւ է, յետոյ հան ի բերանէդ, և ճարմակ շորի վրայ քսէ, եթէ կարմրի արճեգոյն՝ լաւ է:

[32] Ջաղվարն, որ պարսից Մափարվից ասի, ի Չինաց և Բութանդայ երկրէն կու գայ, բոյսոյ տակն է չորացանէն: Եւ է փոքր. այսչափ կամ այսչափ, կամ այլ մեծ՝ այսչափ: Փորձել՝ լեզվովդ թաց: Եւ ճարմակ շորի վրայ քսիր, եթէ ծիրանի գոյն ելանէ, այսինքն բանալ՝ լաւ է, եթէ սեւ՝ լաւ չէ: Քամու դեղ այ, որ քսեն ջրով հարած քամոտ մարդն օգտի Ա[ստուծո]վ: Հընդիկք Նիլքսի ասեն. որսօն թէլումն շաղախեն շատ երախայից սըրտին ճիճու լինի: Ջրով հարեն, տան խմի՝ ճիճուն վերջանալ:

[33] Թանձուն Խաթալու և Չինու և Բութանդայ երկրէն կուգայ: Կերպն ձիք է և բոլոր մին մատուն չափ կամ էլ ձիք: Գոյնն կարմրաշորթ. ճարմացոյն է, և երեսն կոկ է Չինվածք է, որ կտրես՝ մէջն խոշոր լինի՝ լաւ չէ, ապայ եթէ մէջն լաւ կոկ լինի լաւ է, փորձն այս է, որ, առ զբուշտն փչէ, քամով լից և թանձուն ջրով հարէ քարի վրայ և քսէ այն հարած թանձուն ի բուշտն՝ թող մնա. եթէ քամին նստուցանէ բուշտին՝ շատ լանն է, ապայ քսիր ի ուռած կամ քամոտ մարդն՝ օգտի Ա[ստուծո]վ:

## Բ. ԱՀԱՐՈՒՆԻ ՉՈՐԷՔԿԱՐԳԵԱՆ ԱԿԱՆԱԿԱՊ ՎԱԿԱՍԻՆ ՋԵՐԿՈՏԱՍԱՆ ԱԿՈՒՆՍՆ ԱՅՍ Է.

Ըստ հեքրայեցոց, և եօթանասուն և երկու թարգմանչաց օրինակին,

Առաջին՝ Ահարունի վակասի ակն այս է. եքրայեցերէն ասի Օդամ. լաթիներէն ասի Սարգիուս, հայերէն Սարդիոն (լուսանցքում՝ Սեյլան), որ է Յեամանի, կամ կարմիր Սէլլան, նսագոյն արինակապ, խրախատար, և կիսաթափանց:

Երկրորդն եքրայեցոց պետտեղա, լաթիներէն Տօպացիուս, հայերէն Տպագիոն, կամ Պիճատ, որ է դեղին Սէլլան, և Թօպացն կապտաշաղ դեղին, տիրութեան և տեստեսութեան օգնիլ:

Երրորդն ըստ եքրոց օրինակին՝ Բերէքթ, լաթիներէն Չերաֆիտ (լուսանցքում՝ Կապուտ յեաղութ), հայերէն Կայծակն, կապտաշաղ կանաչ: Բայց ըստ եօթանասնից եքր[ալեցերէն] Շօհամ, լաթիներէն Սմարագոյուս, հայերէն Ջմրութ, ազնի կանաչ (կարմիր Յեղթ):

Չորրորդ եքր[այե]լ[ո]ց Նէֆթ, լաթիներէն Կարրունկուլուս, հայերէն Կարկէհան կամ Կայծ, որ է Յեաղութ ալի կարմիր, մահադեղից ընդէմ ուրախափրտ և սակաւաքուն ուղն: (Փիրզայ):

Հինգերորդ եքրոց. Սափիր, լաթ. Սաֆիրուզ, հայ. Թափիրայ կամ Սաֆիր, կապտաշաղ քրքմագուն, որ է Փիրուզայ: (Ալմաս):

Վեցերորդն, եքրոց Հայոմ լաթ. Անդամաս կամ Դիամանդ, հայ. Ադամանդ որ է Ալմաս. պայծառ սպիտակ փայլուն և թափանցիկ իսկ եօթ[անա]լ[ո]ցն եքրոց Ասպայ, լաթ. Եասպիս, հայերէն ևս Յասպիս, որ է Ջարարջաթ կամ Յեաշմ կանանչ դեղնշորթ: (Լաշվարդ):

Եօթնդ երրցց Լեղամ լաթիններն Լիզուրիուզ կամ Թուրքոյզ, հայերէն Գոճագձ, որ է Լաջվարդ, կանանշաշորթ, կապուտ ակն: Չարքակ:

Ութերորդն երրցց Ծարօ, լաթիններն Հիաշինթու, հայերէն Յակինթ կամ Կուպուտակն. դեղնաշորթ կանաչ, որ է զարբջ: Իսկ եօթնանից Ակատ, որ է կարմիր և գունագոյն աղիղն:

Իններորդն երրցց Թարսիս, լաթ. Քրիսօլիթու, հայ. Ոսկեակն, որ է Թիլիայ, որ է իսկաշողակն ճարմակ փայլուն: Իսկ եօթնանից Սուտակ, լաթ. Ամէթիստու, հայ. Սուտակ, որ է Լալ ծիրանեգոյն ակն:

Տասներորդ երրցց Ծօհամ, լաթ. Սմարագաու. Չմրալ, հայ. Դահանակ, որ է Չմրութ: Իսկ եօթնանից Ոսկեակն, որ է Թիլայ:

Մետասաներորդն երրցց Աիզամիլ, լաթ. Նիքս, հայ. եղնգնագոյն, որ է Այնիօն, կապտաշաղ կանանշախառն եղնգագոյն և նման դեղնափայլ, տակտակ գոյն:

Երկտասաներորդն. երրցց Եասպայ, որ է յասպիս, այսինքն Չարքաջայն և կամ Յեաշմ, կանանչ դեղնաշաղ: Իսկ եօթնց Դօն լաթ. Բերիլուզ, հայ. Բիրեղ, որ է Բիլօր, Կապտաշաղ, կանանշաշող դեղնափայլ ակն, որ է Դօն:

**А. А. ХУДАВЕРДЯН — Два списка драгоценных камней.**— Среди армянских средневековых манускриптов сохранилось много списков, содержащих описание, значение, применение и полезность драгоценных камней. Интерес к камням наблюдается с древних времен. Публикуемые оригиналы почерпнуты из рукописи № 1780 Матенадарана им. Маштоца, относятся к позднему средневековью и содержат названия нескольких десятков камней, их характеристику, месторождение, добывание. Исходя из некоторых обстоятельств, автор полагает, что рукопись «Названия камней» является изустной записью. Манускрипты, сообщаемые которыми знания были необходимы как ювелирам, так и продавцам драгоценных камней, можно рассматривать как многоязычные терминологические словари.